ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է Փոքրաքանակ երեխաներով համալրված «Մոդուլային» տիպի հանրակրթական դպրոցների բազմակի օգտագործման օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և ՀՀ Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքի թվով 10 բնակավայրերում տեղակապման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-22/4 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-22/4 գնման պայմանագրում 2023 թվականի մայիսի 10-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	ՀՀ կառավարության 06.04.2023թ. N491-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-22/4 պայմանագրի ֆինանսական միջոցների նվազեցում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.8 կետ:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
19.12.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-22/4 գնման պայմանագրի

ք. Երևան <<10>> 05 2023թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Ազիզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 6-ի N 491-Ն որոշումը և **Փոքրաքանակ երեխաներով համալրված «Մոդուլային» տիպի հանրակրթական դպրոցների բազմակի օգտագործման օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և ՀՀ Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքի թվով 10 բնակավայրերում տեղակապման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների** մատուցման համար Կողմերի միջև 19.12.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-22/4 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.8 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ փոխադարձ համաձայնությամբ լուծել Պայմանագիրը:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011040285, 900011040293, 900011040202, 900011040210, 900011040228, 900011040236, 900011040244, 900011040251, 900011040269, 900011040277 ՀՎՀՀ 02565827 Գլխավոր քարտուղար՝ _____ Ա. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ.	«Հայնախագիծ» ԲԲԸ ք. Երևան, Չարենցի 1 «Ամերիաբանկ» ՓԲԸ ՀՀ 1570015669240100 ՀՎՀՀ 01503291 Տնօրեն՝ _____ Գ. Ազիզյան (ստորագրություն) Կ.Տ.